Հավելված N 1
ՀՀ կառավարության 2018 թվականի
հոկտեմբերի 4-ի N 1132 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորում են օրենքով սահմանված կարգով հայտարարված շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի կազմակերպման և իրականացման, Հայաստանի Հանրապետության և տարածքային զինվորական կոմիսարիատների (այսուհետ նաև՝ զինվորական կոմիսարիատներ), զորակոչի ապահովման գործընթացում օրենքով վերապահված իրավասություններ ունեցող այլ մարմինների գործունեության հետ կապված հարաբերությունները:

2. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի պատշաճ ապահովման և զորակոչի նախապատրաստման աշխատանքների իրականացման համար պատասխանատու են տարածքային զինվորական կոմիսարիատները: Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատը մեթոդական աջակցություն է ցուցաբերում տարածքային զինկոմիսարիատներին զորակոչի նախապատրաստական աշխատանքների իրականացման և զորակոչի անցկացման գործընթացում, պլանավորում է զորակոչի ենթակա քաղաքացիների քանակական և որակական կազմը, իրականացնում է հաշվետու տվյալների ընդհանրացում և վերլուծություն:

II. ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

3. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի պատշաճ կատարումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության և տարածքային զինվորական կոմիսարիատներում յուրաքանչյուր տարվա մարտի 1-ից և սեպտեմբերի 1-ից իրականացվում են նախապատրաստական աշխատանքներ:

4. Զինվորական կոմիսարիատներում առկա զորակոչիկների զինվորական հաշվառման սկզբնական տվյալների՝ այբբենական հաշվառման գրքերի և զորակոչիկների անձնական գործերի, իսկ Հայաստանի Հանրապետությունում ըստ բնակության վայրի հաշվառում չունեցող և օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական հիմնարկներում հաշվառման վերցված զինապարտների վերաբերյալ ստացված ամփոփագրուցակների հիման վրա տարածքային զինվորական կոմիսարիատներում և Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատում կազմվում են հայտարարված զորակոչին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության ենթակա քաղաքացիների անվանացուցակներ (համաձայն N 1 ձևի):

5. Կազմված անվանացուցակների հիման վրա զինվորական կոմիսարիատներում զորակոչիկների անձնական գործերից կազմվում է քարտադարան՝ հետևյալ բաժիններից.

1) 18 տարեկանը լրացողներ,

2) առողջական վիճակի պատճառով տրված և տարկետման ժամկետը լրացողներ,

3) ուսումը շարունակելու համար տրված և տարկետման ժամկետը լրացողներ,

4) ընտանեկան պայմաններից ելնելով տրված և տարկետման ժամկետը լրացողներ,

5) օրենքով սահմանված այլ հիմքերով տրված և տարկետման ժամկետը լրացողներ,

6) զինվորական հաշվառման այլ կարգավիճակ ունեցողներ:

6. Սույն կարգի 5-րդ կետում նշված կատեգորիաների համապատասխան քարտադարանում զորակոչիկների անձնական գործերը դասավորվում են այբբենական կարգով: Անձնական գործերը պահվում են պահարաններում՝ ապահովելով փաստաթղթերի պահպանումը: Քարտադարանի վարման հետ զուգահեռ ձևավորվում է նաև էլեկտրոնային շտեմարան:

7. Զորակոչի նախապատրաստական փուլում զինվորական կոմիսարիատները՝

1) մշակում են զորակոչի նախապատրաստման և անցկացման պլան՝ մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 5-ը և սեպտեմբերի 5-ը,

2) զորակոչի ենթակա քաղաքացիների որակական կազմը ճշտելու նպատակով՝ մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 10-ը և սեպտեմբերի 10-ը իրավասու պետական մարմիններից և կազմակերպություններից պահանջում են զորակոչիկներին վերաբերող հետևյալ տվյալները՝

ա. հոգեբուժական, հակատուբերկուլյոզային, մաշկասեռավարակաբանության, նարկոլոգիական դիսպանսերներում հաշվառված լինելու մասին,

բ. ոստիկանության համապատասխան ստորաբաժանումներում հաշվառված լինելու մասին, որից հետո ստացված տվյալները 5 աշխատանքային օրվա ընթացքում համեմատում են անձնական գործերում առկա տվյալների հետ, իսկ քաղվածքները կցում են անձնական գործերին.

3) կազմում են զորակոչային ռեսուրսների քանակական բնութագրերը և ներկայացնում այն Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատ՝ մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 15-ը և սեպտեմբերի 15-ը.

4) մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 20-ը և սեպտեմբերի 20-ը զորակոչի նախապատրաստական աշխատանքների շրջանակներում կազմակերպում են քաղաքացիներին զինվորական կոմիսարիատ, ինչպես նաև հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմիններ ներկայանալու ժամկետների վերաբերյալ ծանուցումը.

5) կազմում են հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմիններ ըստ օրերի քաղաքացիների ներկայանալու անվանացուցակ, որն էլ մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 25-ը և սեպտեմբերի 25-ը ներկայացնում են հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմիններին:

III. ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

8. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչը հայտարարվելուց հետո զինվորական կոմիսարիատը շարքային կազմի պարտադիր զինվորական զորակոչի ենթակա (այսուհետ՝ զորակոչի ենթակա) քաղաքացուն փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է (համաձայն N 2 ձևի) զինվորական կոմիսարիատ ներկայանալու պարտավորության մասին՝ ծանուցման մեջ նշելով ներկայանալու ժամկետը: Փաստաթղթային եղանակով ծանուցումն իրականացվում է քաղաքացուն ծանուցագիրն առձեռն հանձնելու, իսկ էլեկտրոնային եղանակով ծանուցումը՝ զինվորական կոմիսարիատին քաղաքացու կողմից էլեկտրոնային հասցե տրամադրված լինելու դեպքում՝ այդ էլեկտրոնային հասցեին ծանուցագիր ուղարկելու միջոցով:

9. Զորակոչի ենթակա քաղաքացիները պարտավոր են ծանուցման մեջ նշված ժամկետում ներկայանալ իրենց հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ առավել մոտ զինվորական կոմիսարիատ, որի դեպքում քաղաքացու ներկայացած զինվորական կոմիսարիատում ճշտվում է քաղաքացու կողմից իր հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ ներկայանալու հետ կապված խնդիրը և ներկայանալու հնարավոր ժամկետը, որի վերաբերյալ գրավոր տեղեկացվում է քաղաքացու հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատին, ինչպես նաև համաձայնեցնելով այդ զինվորական կոմիսարիատի հետ՝ քաղաքացուն փաստաթղթային եղանակով տրամադրում է նոր ծանուցագիր՝ վերջինիս հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ ներկայանալու մասին:

10. Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական մարմնում կամ հյուպատոսական հիմնարկում հաշվառված և զորակոչի ենթակա (այդ թվում՝ տարկետման իրավունքը կորցրած կամ տարկետման ժամկետը լրացած) քաղաքացիներին հանրապետական զինկոմիսարիատի ծանուցման հիման վրա Հայաստանի Հանրապետության դիվանագիտական մարմնի կամ հյուպատոսական հիմնարկի

կողմից սույն կարգի 8-րդ կետում սահմանված եղանակով և կարգով ստորագրությամբ կամ էլեկտրոնային կապի միջոցով հանձնվում է ծանուցագիր հանրապետական զինկոմիսարիատ ներկայանալու մասին՝ համապատասխանաբար մինչև տվյալ տարվա մայիսի 1-ը և նոյեմբերի 1-ը: Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական մարմինը կամ հյուպատոսական հիմնարկը զինապարտին ծանուցելու մասին տեղեկատվությունը և ծանուցված քաղաքացիների ցուցակները մինչև տվյալ տարվա մայիսի 20-ը և նոյեմբերի 20-ը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցով ուղարկում է Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատ:

11. Զորակոչի ենթակա քաղաքացիներին ծանուցագրում նշված վայր ներկայանալիս դիմավորում է զինվորական կոմիսարիատի անձնակազմից նշանակված պատասխանատուն կամ հերթապահը, որը բացատրում է նրանց իրավունքներն ու պարտականությունները և համաձայն ցուցակի վարում ներկայացածների հաշվառում:

12. Զինվորական կոմիսարիատի զորակոչի բաժանմունքի համապատասխան պաշտոնատար անձը զորակոչի ենթակա քաղաքացիներին պարզաբանում է նրանց պարտականությունները և ստուգում փաստաթղթերի առկայությունը:

13. Զորակոչիկի անձնական գործում առկա փաստաթղթերը ստուգելուց հետո զինվորական կոմիսարիատի զորակոչի բաժանմունքի աշխատակիցը ճշտում է զորակոչիկի ընտանեկան դրությունը, առողջական վիճակը, կրթությունը, մասնագիտությունը, պարզաբանում է այլ հարցեր՝ կապված զորակոչիկի անձնական տվյալների ուսումնասիրության հետ:

14. Զինվորական կոմիսարները պարտավոր են անձամբ հսկել զորակոչիկների ներկայանալը և միջոցներ ձեռնարկել զորակոչիկների չներկայանալու պատճառների բացահայտման ուղղությամբ: Զինվորական կոմիսարիատ կամ առողջական վիճակի

հետազոտում կամ բժշկական փորձաքննություն իրականացնող մարմին չներկայացած զորակոչիկների տվյալները 3 աշխատանքային օրվա ընթացքում հաղորդվում են ոստիկանության համապատասխան ստորաբաժանումներին՝ նրանց հայտնաբերելու և համապատասխան զինվորական կոմիսարիատ ներկայացնելու հարցում աջակցության համար: Հարգելի պատճառներով զինվորական կոմիսարիատ կամ առողջական վիճակի հետազոտում կամ բժշկական փորձաքննություն իրականացնող մարմին չներկայացած զորակոչիկների համար նշանակվում է ներկայացման մեկ ուրիշ օր:

15. Զորակոչի ենթակա անձանց վերաբերյալ օրենքով սահմանված որոշումներ կայացնելու, ինչպես նաև շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչված զինծառայողներին ծառայության վայրեր նշանակելու գործընթացն ապահովելու նպատակով զինվորական կոմիսարիատներում իրականացվում է զորակոչիկների անձնական տվյալների ուսումնասիրություն՝ ճշտվում են նրանց ընտանեկան պայմանները (համաձայն N 3 ձևի), ստացած կրթությունը, զինվորական ծառայության համար պիտանիության աստիճանը, օրենքով սահմանված այլ պայման-ներ: Ուսումնասիրության արդյունքները ծանոթացվում են տվյալների սուբյեկտին, ով կարող է համապատասխան դիտողություններ և առարկություններ ներկայացնել փաստաթղթում արձանագրված տվյալների ճշգրտության վերաբերյալ:

16. Զորակոչի ենթակա քաղաքացիների անձնական տվյալների ուսումնասի-րությունը սկսվում է զինվորական հաշվառումից և շարունակվում է մինչև պարտադիր զինվորական ծառայության զորակոչը: Այդ աշխատանքներն իրականացվում են զինվորական կոմիսարի անմիջական ղեկավարությամբ:

17. Զորակոչիկների անձնական տվյալների ուսումնասիրությունն իրականացվում է.

1) զորակոչիկների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ անմիջական զրույցի միջոցով.

2) զորակոչիկի վերաբերյալ անձնական գործում առկա փաստաթղթերն ուսումնասիրելու միջոցով.

3) անհրաժեշտության դեպքում այլ իրավասու մարմինների հարցումներ կատարելու միջոցով:

18. Անձնական տվյալների ուսումնասիրության ընթացքում ճշտված տեղեկատվությունը լրացվում է ուսումնասիրման թերթիկում, որը հաստատվում է ուսումնասիրություն անցկացնող պաշտոնատար անձի և զորակոչիկի կամ նրա օրինական ներկայացուցչի ստորագրություններով՝ նշելով ուսումնասիրություն կատարողի անուն, ազգանուն, ինչպես նաև ուսումնասիրությունը կատարելու օրը, ամիսը, տարին:

19. Հայտարարված շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի շրջանակներում զինվորական կոմիսարիատները պարտադիր ապահովում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 1675-Ն, 2018 թվականի ապրիլի 12-ի NN 430-Ն, 450-Ն, 451-Ն և 457-Ն որոշումների համաձայն Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից իրականացվող ծրագրերի, կազմակերպվող սպայական դասընթացների և ռազմաուսումնական հաստատությունների ընդունելության պայմանների վերաբերյալ զորակոչիկների իրազեկումը, այդ ծրագրերին, սպայական դասընթացներին ու ռազմաուսումնական հաստատությունների ընդունելությանը մասնակցելու ցանկություն հայտնած զորակոչիկների հաշվառումը և օրենքով սահմանված այլ գործառույթների իրականացումը:

IV. ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

20. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչերի կազմակերպումն ապահովող մարմիններ են հանդիսանում.

1) զինվորական կոմիսարիատը.

2) մարզային զորակոչային հանձնաժողովը.

3) հանրապետական զորակոչային հանձնաժողովը:

V. ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԸ

21. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչերի պատշաճ իրականացման համար պատասխանատու է համապատասխան զինվորական կոմիսարիատը, որի շրջանակներում զինվորական կոմիսարը՝

1) անհրաժեշտ փաստաթղթերը և տվյալները զինվորական կոմիսարիատ ներկայացվելուց հետո, նախապես կազմված ժամանակացույցի համաձայն, կազմակերպում է զորակոչի ենթակա քաղաքացիների առողջական վիճակի նախնական և անհրաժեշտ այլ հետազոտությունների ուղեգրման գործընթացը.

2) կայացնում է որոշում (համաձայն N 4 ձևի) օրենքով պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման հիմք չունեցող քաղաքացուն շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչելու մասին՝ զորակոչի վերաբերյալ տվյալները եռօրյա ժամկետում գրանցելով զորակոչիկների վերաբերյալ կայացված որոշումների հաշվառման մատյանում (համաձայն N 5 ձևի) և որոշման պատճենը տրամադրելով քաղաքացուն կամ նրա օրինական ներկայացուցչին՝ օրենքով սահմանված իրավունքից օգտվելու դեպքում վերջինիս ծանուցելով իր իրավունքների մասին (համաձայն NN 6 և 6.1-ին ձևերի).

3) նախապատրաստում և նախնական եզրակացությամբ մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողով է ներկայացնում օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով, ինչպես նաև 73-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քաղաքացու՝ գիտական աստիճան ունենալու և մասնագիտական, գիտական կամ մանկավարժական գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ փաստաթղթերը և զորա-

կոչիկի անձնական գործը՝ պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու վերաբերյալ եզրակացություն կայացնելու համար (համաձայն N 7 ձևի).

4) նախապատրաստում և նախնական եզրակացությամբ մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողով է ներկայացնում օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, ինչպես նաև 24-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված հանգամանքների վերաբերյալ փաստաթղթերը և զորակոչիկի անձնական գործը՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրամադրելու վերաբերյալ եզրակացություն կայացնելու համար (համաձայն N 8 ձևի).

5) նախապատրաստում և ոչ ուշ, քան զորակոչն ավարտելու օրվան նախորդող 30-րդ օրը նախնական եզրակացությամբ մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողով է ներկայացնում օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանգամանքների վերաբերյալ փաստաթղթերը՝ հանրապետական զորակոչային հանձնաժողով առաջարկություն ներկայացնելու համար (համաձայն N 9 ձևի).

6) իրավասու բժշկական հանձնաժողով է ներկայացնում զորակոչի ենթակա և առողջական խնդիրներ ունեցող քաղաքացիների նախնական և այլ հետազոտությունները, նրանց առողջական վիճակի վերաբերյալ առկա այլ փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով բժշկական փորձաքննություն իրականացնելու և պիտանիության վերաբերյալ եզրակացություն կայացնելու համար.

7) զորակոչիկների վերաբերյալ սույն որոշմամբ սահմանված Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանները ստանալուց հետո եռօրյա ժամկետում ապահովում է դրանց գրանցումը զորակոչիկների վերաբերյալ կայացված որոշումների հաշվառման մատյանում և համապատասխան գրառումների կատարումը զորակոչիկների այբբենական հաշվառման գրքերում.

8) զորակոչի ավարտից հետո 20 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարին է ներկայացնում հաշվետվություններ՝ տվյալ տարածքային զինվորական կոմիսարիատի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 1675-Ն, 2018 թվականի ապրիլի 12-ի NN 430-Ն, 450-Ն, 451-Ն և 457-Ն որոշումների համաձայն Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից իրականացվող ծրագրերի, կազմակերպվող սպայական դասընթացների և ռազմաուսումնական հաստատությունների ընդունելության ապահովման, զորակոչված կամ պարտադիր զինվորական ծառայությունից ազատված կամ տարկետում ստացած, կամ զորակոչից խուսափած քաղաքացիների վերաբերյալ, որոնք 5 աշխատանքային օրվա ընթացքում ամփոփվում են և Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարի կողմից ներկայացվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին:

22. Օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ տարկետում ստանալու հիմքը հաստատող փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակով և դրանց պատճեններով: Եթե պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ տարկետում ստանալու հիմքը հաստատող փաստաթղթերը հանդիսանում են օտարերկրյա պետությունում տրված փաստաթղթեր, ապա դրանք պետք է ներկայացվեն նոտարական կարգով հաստատված հայերեն թարգմանությամբ: Պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ տարկետում ստանալու հիմքը հաստատող բնօրինակ փաստաթղթերը համեմատվում են դրանց պատճենների հետ, որից հետո բնօրինակ փաստաթղթերը վերադարձվում են քաղաքացուն:

23. Օրենքով սահմանված այն դեպքերում, երբ քաղաքացին իրավունք ունի հրաժարվել իր ունեցած տարկետման իրավունքից կամ ստացած տարկետումից և ցանկություն է հայտնում զորակոչվելու պարտադիր զինվորական ծառայության, ապա

այդ մասին դիմում է ներկայացնում իր զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ: Դիմումը սահմանված կարգով գրանցվելուց հետո տվյալ քաղաքացին ընդգրկվում է զորակոչի ենթակա անձանց ցուցակում, նրա անձնական գործը տեղափոխվում է հաշվառման նախապես կազմված քարտադարան և նրա զորակոչի գործընթացն իրականացվում է ընդհանուր հիմունքներով՝ սույն Կարգի պահանջներին համապատասխան:

24. Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական մարմնում կամ հյուպատոսական հիմնարկում հաշվառված և զորակոչի ենթակա (այդ թվում՝ տարկետման իրավունքը կորցրած կամ տարկետման ժամկետը լրացած) քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչելու կամ զորակոչից տարկետում տրամադրելու կամ զինվորական ծառայությունից ազատելու գործընթացը Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարի կարգադրությամբ իրականացվում է համապատասխան տարածքային զինվորական կոմիսարիատի կողմից՝ սույն կարգի պահանջներին համապատասխան:

VI. ՄԱՐԶԱՅԻՆ (ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ) ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ (Մ(Ե)ԶՀ)

25. Մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովը զինվորական ծառայության զորակոչերի կազմակերպումն ապահովող մարմին է, որը ստեղծվում է շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչը հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Մ(Ե)ԶՀ-ի կազմում ընդգրկվում է հանձնաժողովի նախագահը, առնվազն 3 անդամները և քարտուղարը: Մ(Ե)ԶՀ-ի անդամ չի կարող նշանակվել հանրապետական զորակոչային հանձնաժողովի անդամ նշանակված անձը: Մ(Ե)ԶՀ-ն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով: Նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Մ(Ե)ԶՀ-ի կողմից եզրակացություններն ընդունվում են բաց քվեարկությամբ և

ձայների պարզ մեծամասնությամբ: Մ(Ե)ԶՀ-ի աշխատանքներն արձանագրվում են մատյանում, որի լրացման համար պատասխանատու է հանձնաժողովի քարտուղարը: Ընդունված եզրակացության հետ համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամն իրավունք ունի ներկայացնել հատուկ կարծիք, որը կցվում է եզրակացությանը:

26. Մ(Ե)ԶՀ-ն.

1) զինվորական կոմիսարիատից անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում եզրակացություն է կայացնում օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված հիմքերով, ինչպես նաև օրենքի 73-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քաղաքացու՝ գիտական աստիճան ունենալու և մասնագիտական, գիտական կամ մանկավարժական գործունեությամբ զբաղվելու հիմքով քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու մասին, որից հետո ներկայացված փաստաթղթերը և եզրակացությունը եռօրյա ժամկետում ուղարկում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին.

2) զինվորական կոմիսարիատից անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում եզրակացություն է կայացնում օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, ինչպես նաև օրենքի 24-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված հիմքերով քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին, որից հետո ներկայացված փաստաթղթերը և եզրակացությունը եռօրյա ժամկետում ուղարկում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին.

3) զինվորական կոմիսարիատից անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան համապատասխան զորակոչն ավարտելու օրվան նախորդող 20-րդ օրը հանրապետական զորակոչային հանձնաժողով է ներկայացնում առաջարկություն օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասով

նախատեսված հիմքով քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կամ քաղաքացու դիմումը մերժելու վերաբերյալ.

4) կայացված եզրակացությունները, դրանց կայացման օրվանից 3-օրյա ժամկետում, տրամադրում է քաղաքացուն կամ նրա օրինական ներկայացուցչին:

VII. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ (ՀԶՀ)

27. Հանրապետական զորակոչային հանձնաժողովը պարտադիր զինվորական ծառայության զորակոչերի կազմակերպումն ապահովող մարմին է, որի անհատական կազմը հաստատվում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչը հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: ՀԶՀ-ի կազմում ընդգրկվում է հանձնաժողովի նախագահը, առնվազն 3 անդամները և քարտուղարը: ՀԶՀ-ի անդամ չի կարող նշանակվել մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովի անդամ նշանակված անձը: ՀԶՀ-ն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով: Նիստը համարվում է կայացած, եթե ներկա են հանձնաժողովի անդամների կեսից ավելի: ՀԶՀ-ի կողմից եզրակացություններն ընդունվում են բաց քվեարկությամբ և ձայների պարզ մեծամասնությամբ: ՀԶՀ-ի աշխատանքներն արձանագրվում են մատյանում, որի լրացման համար պատասխանատու է հանձնաժողովի քարտուղարը: Ընդունված եզրակացության հետ համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամն իրավունք ունի ներկայացնել հատուկ կարծիք, որը կցվում է եզրակացությանը:

28. ՀԶՀ-ն.

1) իրավասու բժշկական հանձնաժողովների կողմից քաղաքացու առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություններն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում եզրակացություն է կայացնում (համաձայն N 10 ձևի) օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով և 23-րդ հոդվածի 2-րդ ու 3-րդ մասերով

նախատեսված դեպքերում քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու մասին և եզրակացությունը եռօրյա ժամկետում ուղարկում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին.

2) իրավասու բժշկական հանձնաժողովների կողմից քաղաքացու առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություններն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում եզրակացություն է կայացնում (համաձայն N 11 ձևի) օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերով և ժամկետներում քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին և եզրակացությունը եռօրյա ժամկետում ուղարկում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին.

3) Մ(Ե)ԶՀ-ից անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան զորակոչն ավարտելու օրվան նախորդող 10-րդ օրը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին է ներկայացնում եզրակացություն (համաձայն N 12 ձևի)՝ օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հիմքով քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կամ քաղաքացու դիմումը մերժելու վերաբերյալ.

4) կայացված եզրակացությունները, դրանց կայացման օրվանից 3-օրյա ժամկետում, տրամադրում է քաղաքացուն կամ նրա օրինական ներկայացուցչին.

5) քննարկում է մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովների, ինչպես նաև իրավասու բժշկական հանձնաժողովների և զինվորական կոմիսարիատների (զինվորական կոմիսարների) գործունեության կամ կայացրած եզրակացությունների (որոշումների) վերաբերյալ ներկայացված առաջարկությունները, բացատրությունները, առարկությունները կամ բողոքները և քննարկման արդյունքների մասին 10 աշխատանքային օրվա ընթացքում հայտնում է դիմումատուին:

29. ՄԶՀ-ի և ՀԶՀ-ի եզրակացություններն ստանալուց հետո 3-օրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան զորակոչն ավարտելու օրվան նախորդող 5-րդ օրը Հայաստանի Հանրապետության

պաշտպանության նախարարի հրամաններով քաղաքացիներին տրվում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում կամ պարտադիր զինվորական ծառայությունից ազատում կամ մերժվում է տարկետումների կամ ազատումների տրամադրումը:

VIII. ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԸ

30. Սույն կարգի 21-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված որոշումը կայացնելուց հետո զինվորական կոմիսարիատը քաղաքացուն փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով (համաձայն N 13 ձևի) ծանուցում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու նպատակով զինվորական կոմիսարիատ ներկայանալու պարտավորության մասին՝ ծանուցման մեջ նշելով ներկայանալու ժամկետը: Պարտադիր զինվորական ծառայության զորակոչվող զորակոչիկները տեղեկացվում են հանրապետական հավաքակայան ներկայացվելու համար զինկոմիսարիատ ներկայանալու ժամանակի, հավաքակայանում թույլատրելի առարկաների և պարագաների, զինծառայող համարվելու ժամանակի, դրանից բխող իրավունքների և պարտականությունների մասին:

31. Ծանուցագրում նշված օրը զինվորական կոմիսարիատ ներկայանալիս զինվորական կոմիսարիատում ստուգվում է զինվորական ծառայության զորակոչվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը: Մասնավորապես ստուգվում են. զորակոչիկների անձնական գործերը, զինգրքույկները, հաշվեծառայողական քարտերը (ՀԾՔ-երը)՝ հանրային ծառայությունների համարանիշի պարտադիր գրառմամբ, իսկ հանրային ծառայությունների համարանիշ ստացած չլինելու դեպքում՝ այդ մասին իրավասու պետական մարմնի կողմից տրված տեղեկանքը, վիճակահանության թերթիկները (զինվորական կոմիսարիատների կողմից լրացված և կնիքով հաստատված), «Հայրենիքի պաշտպանի անհատական գրքույկները» (զորակոչիկների կողմից իրենց առողջական վիճակի վերաբերյալ անձամբ լրացված գնահատականներով), բժշկական գրքույկները՝ լրացված և ստորագրված զինկոմիսարիատի բժշկի (ԶԲՀ-ի կամ ԱՊ

ԶԲՀ-ի պատասխանատու անձի) կողմից՝ նախկինում զորակոչիկների տարած վարակիչ հիվանդությունների, կատարված կանխարգելիչ պատվաստումների և դրանց հակացուցումների վերաբերյալ տեղեկատվությամբ, զինված ուժերի համար պատրաստված կրտսեր մասնագետների համար՝ վարորդական իրավունքի և պաշտպանական բնույթի հասարակական կազմակերպություններում դասընթացներ ավարտած լինելու վկայականների առկայությունը, ՀԾՔ-ի համապատասխան սյունակում կատարված նշումները՝ օրենքով նախատեսված արտոնություններից օգտվելու մասին և դրանց վերաբերյալ ներկայացված փաստաթղթերի ամբողջականությունը՝ հաստատված զինվորական կոմիսարի կնիքով:

32. Զինվորական կոմիսարիատ ներկայացած զորակոչիկներին հանրապետական հավաքակայան ներկայացնելու համար կազմվում է անվանացուցակ (համաձայն N 14 ձևի), որը հաստատվում է զինվորական կոմիսարի ստորագրությամբ և կնիքով:

33. Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի համաձայն հայտարարված զորակոչի շրջանակներում շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության ենթակա քաղաքացիներին հանրապետական հավաքակայանում կենտրոնացված ձևով և վիճակահանությամբ (բացառությամբ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասում նշված քաղաքացիների) ըստ զորամասերի ծառայության նշանակման գործընթացն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով սահմանված կարգով: Հանրապետական հավաքակայանում ուսումնասիրվում են հանրապետական հավաքակայան ներկայացված քաղաքացիների վերաբերյալ սույն կարգի 31-րդ կետում նշված անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկությունների առկայությունը, ինչպես նաև առողջական վիճակը, որի արդյունքներով անհրաժեշտ փաստաթղթերի և/կամ տեղեկությունների ոչ լիարժեք լինելու կամ քաղաքացու առողջական վիճակը զորակոչվելու համար խոչընդոտ հանդիսանալու դեպքում քաղաքացին կարող է հետ վերադարձվել զինվորական կոմիսարիատ:

34. Պարտադիր զինծառայողների՝ ըստ զորմասերի ծառայության նշանակվելուց հետո զինված ուժերի գլխավոր շտաբի կազմզորահավաքային վարչությունը համապատասխան տարածքային զինվորական կոմիսարիատներ է ուղարկում զորակոչված անձանց անվանացուցակը՝ նշանակված զորամասերի պայմանական համարների գրառումներով: Ստացված անվանացուցակները տարածքային զինվորական կոմիսարիատներն անհապաղ փակցնում են քաղաքացիների համար տեսանելի վայրերում:

35. Հաստատված ցուցակների հիման վրա զորակոչիկների անձնական գործերում և այբբենական հաշվառման գրքերում կատարվում է գրառում զինված ուժեր զորակոչվելու մասին՝ նշելով զորակոչի օրը, ամիսը, տարին և զորամասի պայմանական համարը:

36. Հերթական զորակոչի ավարտից հետո զինվորական կոմիսարի հանձնարարությամբ զորակոչի բաժանմունքի պետը ստուգում է զորակոչիկների անձնական գործերի և նրանց վերաբերյալ կայացված որոշումների (եզրակացությունների), անհրաժեշտ գրառումների առկայությունը: Ստուգման արդյունքները արձանագրվում են, որը հաստատվում է զինվորական կոմիսարի ստորագրությամբ և կնիքով:

37. Հայտարարված զորակոչի ընթացքում զինվորական կոմիսարիատ չներկայացած կամ զորակոչից խուսափած անձանց անձնական գործերի պատճենները, հաստատված զինվորական կոմիսարի կնիքով, զորակոչի ավարտից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան միջնորդությամբ ներկայացվում են Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության համապատասխան կայազորային քննչական բաժին՝ միաժամանակ տեղեկացնելով համապատասխան կայազորային զինվորական դատախազությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Ձև N 1

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
_____ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

_____ _____ _____
(կոչումը) (ստորագրությունը) (անվանատառը, ազգանունը)

ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
20 թ. ԱՄԱՌԱՅԻՆ (ԶՄԵՌԱՅԻՆ) ԶՈՐԱԿՈՉԻ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ
ԱՆՎԱՆԱՑՈՒՑԱԿ

NN ը/կ	Ազգանունը, անունը, հայրանունը	Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը	Բնակության վայրի հաշվառման հասցեն	Հեռախոսահամարը	Ծանոթա-գրություն

_____ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԶՈՐԱԿՈՉԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏ

_____ _____ _____
(կոչումը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Ձև N 2

Քաղաքացի _____

Հասցեն_____

_____

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14-րդ հոդվածի 3-րդ մասի և «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի՝ Դուք ենթակա եք զորակոչման պարտադիր զինվորական ծառայության 20 թվականի _____ զորակոչին:

Անհրաժեշտ է 20 թ. _____-ի _____-ին ժամը _____-ին անձը հաստատող
(ամիս) (օր)
փաստաթղթով ներկայանալ _____ զինվորական կոմիսարիատ, հետևյալ հասցեով՝_____, զորակոչային միջոցառումներին մասնակցելու համար:

_____ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ _____
(զինկոմիսարիատ) (ստորագրությունը)

_____
(կոչումը (անունը, ազգանունը)

Կտրման գիծ

_____

ՍՏԱՑԱԿԱՆ

_____ 20 թվականին զորակոչային միջոցառումներին մասնակցելու համար զինվորական կոմիսարիատ ներկայանալու ծանուցագիրը ստացա:

_____
(անունը, հայրանունը, ազգանունը)

_____
(ստորագրությունը)

____ _____ 20 թ.

Ծանուցագիրը էլեկտրոնային եղանակով ուղարկվելու դեպքում ստացականը չի լրացվում:

Ձև N 3

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(զորակոչիկի ընտանեկան պայմանների ուսումնասիրման վերաբերյալ)

_____ զինվորական կոմիսարիատի զորակոչի բաժանմունքի

_____

(պաշտոնը, կոչումը,

_____կողմից կատարվեց

անունը, ազգանունը)

զորակոչիկ _____

(ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, անունը, հայրանունը, ազգանունը)

ընտանեկան պայմանների ուսումնասիրություն:

1. Ընտանեկան պայմանների նկարագրությունը _____

_____

_____

_____

_____

_____

_____:

2. Լրացուցիչ տեղեկություններ _____

_____

_____

_____:

Ուսումնասիրությունը իրականացրեց _____

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Կ.Տ.

_____ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

_____

(կոչումը, ստորագրությունը, անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Ուսումնասիրությանը ծանոթացա՝ զորակոչիկ _____ _____

(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Առարկություններ ունենալու դեպքում նշվում են առարկությունները:

Ձև N 4

_____ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ 20 թվականի N _____

ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 20 թվականի _____-ի ____-ի N _____ որոշման պահանջներով՝ որոշում եմ.

1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչել պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման հիմք չունեցող քաղաքացի_____
_____ -ին:
(ծննդյան օր, ամիս, տարի, անուն, հայրանուն, ազգանուն)

2. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում տալ քաղաքացի _____
_____ -ին (օրինական ներկայացուցչին):
(անուն, հայրանուն, ազգանուն)

1. Սույն որոշումը երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել դատարան կամ հանրապետական զորակոչային հանձնաժողովին:
2. Բողոք ներկայացնելը, մինչև որոշման վերանայումը, չի կասեցնում դրա կատարումը:

Պահպանման ժամկետը՝ _____ տարի

Ձև N 5

ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՔԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

_____ ԹՎԱԿԱՆԻ _____ ՔՈՐԱԿՈՉԻՆ

ԵՆԹԱԿԱ ՔՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՅԱՑՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

Մ Ա Տ Յ Ա Ն

Սկսված է՝ ___ _____ 20 թ.

Ավարտված է՝ ___ _____20 թ.

NN ը/կ	Ազգանունը, անունը, հայրանունը	Ծննդյան թիվը	Որոշում կայացնող մարմինը

Որոշման համարը և կայացման օրը, ամիսը տարեթիվը	Կայացված որոշումը	Ծանոթագրություն

Ձև N 6

ԾԱՆՈՒՑՄԱՆ ԹԵՐԹԻԿ

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների համաձայն՝ շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության ընթացքում մարտական հերթապահության մեջ չի կարող ընդգրկվել այն զինծառայողը (բացառությամբ, եթե նա ցանկություն է հայտնել ընդգրկվելու մարտական հերթապահության մեջ, ինչպես նաև սույն հոդվածի 5-րդ մասում նշված զինծառայողների)՝

1) որը հանդիսանում է 63 տարին լրացած կամ երրորդ խմբի հաշմանդամություն ունեցող կամ երկրորդ խմբի հաշմանդամություն (եթե սահմանված չէ ինքնասպասարկման ապահովման ունակության երկրորդ աստիճանի կենսագործունեության սահմանափակում) ունեցող ծնողների (միայնակ ծնողի) միակ զավակը.

2) որն ունի Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների կամ զինված ուժերում և այլ զորքերում ծառայության ընթացքում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետությունում տեղակայված օտարերկրյա պետությունների զինվորական ստորաբաժանումներում ծառայողական պարտականություններ կատարելիս զոհված (մահացած) հայր (մայր) կամ եղբայր (քույր).

3) որն ամուսնացած է և ունի մեկ երեխա.

4) որի ծնողները մահացած են.

5) որի մեկ ծնողը մահացած է և այդ զինծառայողն ընտանիքի միակ զավակն է, կամ ընտանիքի մյուս զավակներն անչափահաս են, կամ ընտանիքի մյուս զավակները չափահաս են և ունեն հաշմանդամություն կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել են անգործունակ:

Նույն օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի պահանջների համաձայն՝ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պայմաններ ունեցող շարքային կազմի պարտադիր զինծառայողներին 6 ամիսը մեկ անգամ տրվում է լրացուցիչ արձակուրդ 5 օրացուցային օր տևողությամբ:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասով և 28-դ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետով սահմանված իրավունքներին ծանոթացել եմ.

_____ _____

(ստորագրությունը) (անունը, հայրանունը, ազգանունը)

_____ _____ 20 թ.

Ձև N 6.1

ԾԱՆՈՒՑՄԱՆ ԹԵՐԹԻԿ

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների համաձայն՝հայտարարված զորակոչի ընթացքում շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչված եղբայրներն իրենց ցանկությամբ ծառայության են նշանակվում միևնույն զորամասում: Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող եղբայր ունեցող շարքային կազմի պարտադիր զինծառայողն իր ցանկությամբ ծառայության է նշանակվում եղբոր ծառայության վայրի զորամասում, եթե շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող եղբոր ծառայության ժամկետը չի գերազանցում 17 ամիսը:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված իրավունքին ծանոթացել եմ.

_____

(ստորագրություն, անուն, հայրանուն, ազգանուն)

_____ _____ 20 թ.

Ձև N 7

ՆԱԽՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
(շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից քաղաքացու ազատման ենթակա լինելու վերաբերյալ)

Քաղաքացի _____
(ծննդյան, օր, ամիս, տարի, անուն,հայրանուն, ազգանուն,

_____ զինկոմիսարիատ:
հաշվառման զինվորական կոմիսարիատ)

1. Կարգավիճակի նկարագրությունը _____

_____

_____

_____

_____

_____

_____

_____:

2. Հիմք հանդիսացող փաստաթղթերը _____

_____

_____

_____:

3. Նախնական եզրակացություն՝

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի_____հոդվածի _____ մասի _____ կետի պահանջների ենթակա է ազատման պարտադիր զինվորական ծառայությունից:

Ներկայացվում է մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողով՝ պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու վերաբերյալ եզրակացություն կայացնելու համար:

_____ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

Կ.Տ.

_____
(կոչում, ստորագրություն, անուն, ազգանուն)

____ _____ 20 թ.

18_1132

ՄԱՐԶԱՅԻՆ (ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ) ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

_____ _____ 20 թվականի N _____

ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՔԱՂԱՔԱՑՈՒ՝ ԱԶԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 20 թվականի _____-ի ____-ի N _____ որոշման պահանջներով՝ _____ մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովը եզրակացնում է.

1. Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի _____ հոդվածի _____ մասի _____ կետի պահանջների ենթակա է ազատման պարտադիր զինվորական ծառայությունից՝ _____

_____ -ը:

(քաղաքացու ծննդյան օր, ամիս, տարի, անուն, հայրանուն, ազգանուն)

2. Եզրակացության օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին և տրամադրել քաղաքացի _____ -ին (օրինական ներկայացուցչին):

Հանձնաժողովի նախագահ՝ _____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

անդամներ՝

_____

_____

_____

_____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

քարտուղար՝ _____:

(ստորագրություն, անուն, ազգանուն)

____ _____ 20 թ.

Զինվորական կոմիսարիատում հաշվառված է N _____, _____ 20 թ.

Ձև N 8

ՆԱԽՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
(շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքից քաղաքացու օգտվելու վերաբերյալ)

Քաղաքացի _____
(ծննդյան, օր, ամիս, տարի, անուն,հայրանուն, ազգանուն,

_____ զինկոմիսարիատ:
հաշվառման զինվորական կոմիսարիատ)

1. Կարգավիճակի նկարագրությունը _____

_____

_____

_____

_____

_____

_____

_____:

2. Հիմք հանդիսացող փաստաթղթերը _____

_____

_____

_____:

3. Նախնական եզրակացություն՝

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի_____հոդվածի _____ մասի _____ կետի պահանջների օգտվում է մինչև 20 թվականի _____-ի ____-ը պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու իրավունքից:

Ներկայացվում է մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողով՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու վերաբերյալ եզրակացություն կայացնելու համար:

_____ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

Կ.Տ.

_____
(կոչում, ստորագրություն, անուն, ազգանուն)

____ _____ 20 թ.

ՄԱՐԶԱՅԻՆ (ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ) ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

_____ 20 թվականի N _____

ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՔԱՂԱՔԱՑՈՒ՝ ՏԱՐԿԵՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 20 թվականի _____-ի ____-ի N _____ որոշման պահանջներով՝ _____ մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովը եզրակացնում է.

1. Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի_____հոդվածի_____ մասի _____ կետի պահանջների՝ _____

_____ -ը

(ծննդյան օր, ամիս, տարի, անուն, հայրանուն, ազգանուն)

օգտվում է շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքից՝ մինչև 20 թվականի _____ -ի ____ -ը:

2. Եզրակացության օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին և տրամադրել քաղաքացի _____ -ին (օրինական ներկայացուցչին):

Հանձնաժողովի նախագահ՝ _____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

անդամներ՝

_____

_____

_____

_____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

քարտուղար՝ _____:

(ստորագրություն, անուն, ազգանուն)

____ _____ 20 թ.

Զինվորական կոմիսարիատում հաշվառված է N _____, ____ _____ 20 թ.

Ձև N 9

ՆԱԽՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

(շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից օրենքով չնախատեսված դեպքում քաղաքացուն տարկետում տրամադրելու վերաբերյալ)

Քաղաքացի _____
(ծննդյան, օր, ամիս, տարի, անուն,հայրանուն, ազգանուն,

_____ զինկոմիսարիատ:
հաշվառման զինվորական կոմիսարիատ)

1. Ընտանեկան պայմանների նկարագրությունը _____

_____

_____

_____

_____

_____

_____

_____:

2. Հիմք հանդիսացող փաստաթղթերը _____

_____

_____

_____:

3. Նախնական եզրակացություն՝

Հաշվի առնելով քաղաքացի _____-ի ընտանեկան պայմանները՝ ներկայացվում է մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողով՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի և 25-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի պահանջների համաձայն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կամ քաղաքացու դիմումը մերժելու վերաբերյալ հանրապետական զորակոչային հանձնաժողով առաջարկություն ներկայացնելու համար:

_____ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

Կ.Տ.

_____
(կոչում, ստորագրություն, անուն, ազգանուն)

____ _____ 20 թ.

18_1132

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

(շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից օրենքով չնախատեսված դեպքում քաղաքացուն տարկետում տրամադրելու վերաբերյալ)

Ուսումնասիրելով _____ զինվորական կոմիսարիատի կողմից ներկայացված քաղաքացի _____-ին օրենքով չնախատեսված դեպքում պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու վերաբերյալ նախնական եզրակացությունը և վերջինիս ընտանեկան պայմանների վերաբերյալ փաստաթղթերը՝ _____ մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովը՝ ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 20 թվականի _____-ի ____-ի N _____ որոշման պահանջներով՝ ներկայացնում է առաջարկություն հանրապետական զորակոչային հանձնաժողով՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով _____-ին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու նպատակահարմարության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին եզրակացություն ներկայացնելու համար:

Հանձնաժողովի նախագահ՝ _____
(ստորագրություն, անուն, ազգանուն)

անդամներ՝

_____

_____

_____

_____
(ստորագրություն, անուն, ազգանուն)

քարտուղար՝ _____:
(ստորագրություն, անուն, ազգանուն)

____ _____ 20 թ.

Ձև N 10

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

_____ _____ 20 թվականի N _____

ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՔԱՂԱՔԱՑՈՒ՝ ԱԶԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 20 թվականի _____-ի ____-ի N _____ որոշման պահանջներով և հիմք ընդունելով իրավասու բժշկական հանձնաժողովի եզրակացությունները՝ հանրապետական զորակոչային հանձնաժողովը եզրակացնում է.

1. Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի _____ հոդվածի _____ մասի _____ կետի պահանջների՝ ներքոնշյալ քաղաքացիներն օգտվում են շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատման իրավունքից.

/Հ	Զինվորական կոմիսարիատ	Ազգանուն, անուն, հայրանուն, ծննդյան օր, ամիս, տարի	Հիվանդությունների ցանկի հոդվածը և կետը
1			
2			

2. Եզրակացությունը եռօրյա ժամկետում ուղարկել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին:

Հանձնաժողովի նախագահ՝ _____
(ստորագրություն, անուն, ազգանուն)

անդամներ՝

_____

_____

_____

_____

քարտուղար՝ _____
(ստորագրություն, անուն, ազգանուն)

____ _____ 20 թ.

Զինվորական կոմիսարիատում հաշվառված է N _____, ____ _____ 20 թ.

Ձև N 11

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

_____ _____ 20 թվականի N _____

ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՔԱՂԱՔԱՑՈՒ՝ ՏԱՐԿԵՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 20 թվականի _____-ի ____-ի N _____ որոշման պահանջներով և հիմք ընդունելով իրավասու բժշկական հանձնաժողովի եզրակացությունները՝ հանրապետական զորակոչային հանձնաժողովը եզրակացնում է.

1. Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի _____ հոդվածի _____ մասի _____ կետի պահանջների՝ ներքոնշյալ քաղաքացիներն օգտվում են շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքից.

NN ը/կ	Զինվորական կոմիսարիատ	Ազգանուն, անուն, հայրանուն, ծննդյան օր, ամիս, տարի	Տարկետման ժամկետը	Հիվանդությունների ցանկի հոդվածը և կետը
1.				
2.				

2. Եզրակացությունը եռօրյա ժամկետում ուղարկել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին:

Հանձնաժողովի նախագահ՝ _____
(ստորագրություն, անուն, ազգանուն)

անդամներ՝

_____

_____

_____

քարտուղար՝ _____
(ստորագրություն, անուն, ազգանուն)

____ _____ 20 թ.

Զինվորական կոմիսարիատում հաշվառված է N _____, ____ _____ 20 թ.

Ձև N 12

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

_____ 20 թվականի N _____

ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 20 թվականի _____-ի ____-ի N _____ որոշման պահանջներով և հաշվի առնելով _____ մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովի առաջարկությունը՝ հանրապետական զորակոչային հանձնաժողովը Հայաաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին ներկայացնում է եզրակացություն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով _____-ին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու նպատակահարմարության վերաբերյալ:

Հանձնաժողովի նախագահ՝ _____
(ստորագրություն, անուն, ազգանուն)

անդամներ՝

_____

_____

_____

_____
(ստորագրություն, անուն, ազգանուն)

քարտուղար՝ _____:
(ստորագրություն, անուն, ազգանուն)

____ _____ 20 թ.

Ձև N 13

Քաղաքացի _____

Հասցեն_____

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14-րդ հոդվածի 3-րդ մասի և «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի Դուք ենթակա եք _____ շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի:

Անհրաժեշտ է 20 թ. _____-ի _____-ին ժամը _____-ին անձը հաստատող փաստաթղթով
(ամիս) (օր)

ներկայանալ _____ զինվորական կոմիսարիատ հետևյալ հասցեով՝_____, շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու համար:

Պարտավոր եմ նաև տեղեկացնել, որ պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու համար տարածքային զինվորական կոմիսարիատ չներկայանալը և զորակոչից խուսափելն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվության:

_____ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ _____
(զինկոմիսարիատ) (ստորագրություն,

_____
կոչում, անուն, ազգանուն)

Կտրման գիծ

_____

ՍՏԱՑԱԿԱՆ

____ _____20 թվականին պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու համար զինվորական կոմիսարիատ ներկայանալու ծանուցագիրը ստացա:

_____
(անուն, հայրանուն, ազգանուն)

_____
(ստորագրություն)
____ _____ 20 թ.

Ծանուցագիրը էլեկտրոնային եղանակով ուղարկվելու դեպքում ստացականը չի լրացվում:

Ձև N 14

_____ ՔԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻՑ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՑԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՔՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑՈՒՑԱԿ

NN ը/կ	Ազգանունը, անունը, հայրանունը	Ծննդյան օրը, ամիսը, տարին	Կրթությունը	Քինվորական գրքույկի սերիան և համարը	ՀԾՀ	Նախորոշված զորամասի պայմանակ համարը		Զորամա ուղարկելու օրը
						Ուսումնական	Հիմնական	

_____ ՔԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

Կ.Տ.

_____

(կոչում, ստորագրություն, անուն, ազգանուն)

____ _____ 20 թ.

18_1132

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2018 թվականի
հոկտեմբերի 4-ի N 1132 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՊԱՀԵՍՏԱԶՈՐԻ ՍՊԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորում են օրենքով սահմանված կարգով հայտարարված պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի կազմակերպման և իրականացման, Հայաստանի Հանրապետության և տարածքային զինվորական կոմիսարիատների (այսուհետ նաև՝ զինվորական կոմիսարիատներ), զորակոչի ապահովման գործընթացում օրենքով վերապահված իրավասություններ ունեցող այլ մարմինների գործունեության հետ կապված հարաբերությունները:

2. Պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի պատշաճ ապահովման և զորակոչի նախապատրաստման աշխատանքների իրականացման համար պատասխանատու են տարածքային զինվորական կոմիսարիատները: Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատը մեթոդական աջակցություն է ցուցաբերում տարածքային զինկոմիսարիատներին զորակոչի նախապատրաստական աշխատանքների իրականացման և զորակոչի անցկացման գործընթացում, պլանավորում է զորակոչի ենթակա քաղաքացիների քանակական և որակական կազմը, իրականացնում է հաշվետու տվյալների ընդհանրացում և վերլուծություն:

3. Պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչին կանչվելու ենթակա են բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցած ու պահեստազորի

սպայական կազմ որակավորված արական սեռի քաղաքացիները (այսուհետ նաև՝ պահեստազորի սպայական կազմ)՝ մինչև 35 տարին լրանալը, ներառյալ այն քաղաքացիները, որոնց 35 տարին լրանում է տվյալ զորակոչի ընթացքում:

II. ՊԱՀԵՍՏԱԶՈՐԻ ՍՊԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՔԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

4. Պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի պատշաճ կատարումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության և տարածքային զինվորական կոմիսարիատներում յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-ից իրականացվում են նախապատրաստական աշխատանքներ:

5. Զինվորական կոմիսարիատներում առկա պահեստազորի սպայական կազմի անձնական գործերի, իսկ Հայաստանի Հանրապետությունում ըստ բնակության վայրի հաշվառում չունեցող և օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական մարմնում կամ հյուպատոսական հիմնարկում հաշվառման վերցված զինապարտների վերաբերյալ ստացված ամփոփագրերի հիման վրա տարածքային զինվորական կոմիսարիատներում և Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատում կազմվում են սպայական զորակոչին ենթակա պահեստազորի սպայական կազմի անվանացուցակներ (համաձայն N 1 ձևի): Կազմված անվանացուցակների հիման վրա զինվորական կոմիսարիատներում զորակոչի ենթակա անձանց անձնական գործերն առանձնացվում են քարտադարանից:

6. Զորակոչի նախապատրաստական փուլում զինվորական կոմիսարիատները՝

1) մշակում են զորակոչի նախապատրաստման և անցկացման պլան՝ մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 5-ը,

2) զորակոչի ենթակա պահեստազորի սպայական կազմի որակական կազմը ճշտելու նպատակով՝ մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 10-ը համապատասխան

պետական մարմիններից և կազմակերպություններից պահանջում են զորակոչի ենթակա անձանց վերաբերող հետևյալ տվյալները՝

ա. հոգեբուժական, հակատուբերկուլյոզային, մաշկասեռավարակաբանության, նարկոլոգիական դիսպանսերներում հաշվառված լինելու մասին,

բ. ոստիկանության համապատասխան ստորաբաժանումներում հաշվառված լինելու մասին, որից հետո ստացված տվյալները 5 աշխատանքային օրվա ընթացքում համեմատում են անձնական գործերում առկա տվյալների հետ, իսկ քաղվածքները կցում են անձնական գործերին,

3) կազմում են զորակոչային ռեսուրսների քանակական բնութագրերը և ներկայացնում այն Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատ՝ մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 15-ը,

4) մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 20-ը զորակոչի նախապատրաստական աշխատանքների շրջանակներում կազմակերպում են պահեստազորի սպայական կազմի զինվորական կոմիսարիատ, ինչպես նաև հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմիններ ներկայանալու ժամկետների վերաբերյալ ծանուցումը,

5) կազմում են հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմիններ ըստ օրերի քաղաքացիների ներկայանալու անվանացուցակ, որն էլ մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 25-ը ներկայացնում են հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմիններ:

III. ՊԱՀԵՍՏԱԶՈՐԻ ՍՊԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

7. Պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչը հայտարարվելուց հետո զինվորական կոմիսարիատը պահեստազորի

սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա (այսուհետ՝ զորակոչի ենթակա) քաղաքացուն փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով (համաձայն N 2 ձևի) ծանուցում են զինվորական կոմիսարիատ ներկայանալու պարտավորության մասին՝ ծանուցման մեջ նշելով ներկայանալու ժամկետը: Փաստաթղթային եղանակով ծանուցումն իրականացվում է քաղաքացուն ծանուցագիրն առձեռն հանձնելու, իսկ էլեկտրոնային եղանակով ծանուցումը՝ զինվորական կոմիսարիատին քաղաքացու կողմից էլեկտրոնային հասցե տրամադրված լինելու դեպքում՝ այդ էլեկտրոնային հասցեին ծանուցագիր ուղարկելու միջոցով:

8. Զորակոչի ենթակա քաղաքացիները պարտավոր են ծանուցման մեջ նշված ժամկետում ներկայանալ իրենց հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ առավել մոտ զինվորական կոմիսարիատ, որի դեպքում քաղաքացու ներկայացած զինվորական կոմիսարիատում ճշտվում է քաղաքացու կողմից իր հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ ներկայանալու հետ կապված խնդիրը և ներկայանալու հնարավոր ժամկետը, որի վերաբերյալ գրավոր տեղեկացվում է քաղաքացու հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատին, ինչպես նաև համաձայնեցնելով այդ զինվորական կոմիսարիատի հետ՝ քաղաքացուն փաստաթղթային եղանակով տրամադրում է նոր ծանուցագիր՝ վերջինիս հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ ներկայանալու մասին:

9. Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական մարմնում կամ հյուպատոսական հիմնարկում հաշվառված և զորակոչի ենթակա (այդ թվում՝ տարկետման իրավունքը կորցրած կամ տարկետման ժամկետը լրացած) քաղաքացիներին հանրապետական զինկոմիսարիատի ծանուցման հիման վրա դիվանագիտական կամ հյուպատոսական մարմնի կողմից սույն կարգի 7-րդ կետում սահմանված եղանակով և կարգով ստորագրությամբ կամ էլեկտրոնային կապի միջոցով հանձնվում է ծանուցագիր հանրապետական զինկոմիսարիատ ներկայանալու մասին՝

համապատասխանաբար մինչև տվյալ տարվա նոյեմբերի 1-ը: Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական մարմինը կամ հյուպատոսական հիմնարկը զինապարտին ծանուցելու մասին տեղեկատվությունը և ծանուցված քաղաքացիների ցուցակները մինչև տվյալ տարվա նոյեմբերի 20-ը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցով ուղարկում է հանրապետական զինկոմիսարիատ:

10. Զորակոչին կանչված քաղաքացիներին ծանուցագրում նշված վայր ներկայանալիս դիմավորում է զինվորական կոմիսարիատի անձնակազմից նշանակված պատասխանատուն կամ հերթապահը, որը բացատրում է նրանց իրավունքներն ու պարտականությունները և համաձայն ցուցակի վարում ներկայացածների հաշվառում:

11. Զինվորական կոմիսարիատի զորահավաքային բաժանմունքի համապատասխան պաշտոնատար անձը զորակոչի ենթակա անձանց պարզաբանում է նրանց պարտականությունները և ստուգում փաստաթղթերի առկայությունը:

12. Զորակոչի ենթակա անձանց անձնական գործում առկա փաստաթղթերը ստուգելուց հետո զինվորական կոմիսարիատի զորահավաքի բաժանմունքի աշխատակիցը ճշտում է վերջինիս ընտանեկան դրությունը, առողջական վիճակը, պարզաբանում է այլ հարցեր՝ կապված նրա անձնական տվյալների ուսումնասիրության հետ:

13. Զինվորական կոմիսարները պարտավոր են անձամբ հսկել զորակոչի ենթակա անձանց ներկայանալը և միջոցներ ձեռնարկել նրանց չներկայանալու պատճառների բացահայտման ուղղությամբ: Զինվորական կոմիսարիատ կամ առողջական վիճակի հետազոտում կամ բժշկական փորձաքննություն իրականացնող մարմին չներկայացած զորակոչի ենթակա անձանց տվյալները 3 աշխատանքային օրվա ընթացքում հաղորդվում են ոստիկանության համապատասխան ստորաբաժանումներին՝ նրանց հայտնաբերելու և համապատասխան զինվորական կոմիսարիատ ներկայացնելու հարցում աջակցության համար: Հարգելի պատճառներով զինվորական կոմիսարիատ կամ առողջական վիճակի

հետազոտում կամ բժշկական փորձաքննություն իրականացնող մարմին չներկայացած զորակոչի ենթակա անձանց համար նշանակվում է ներկայացման մեկ ուրիշ օր:

14. Զորակոչի ենթակա անձանց ուսումնասիրությունը սկսվում է զինվորական հաշվառումից և շարունակվում է մինչև պարտադիր զինվորական ծառայության զորակոչը: Այդ աշխատանքներն իրականացվում են զինվորական կոմիսարի անմիջական ղեկավարությամբ: Զորակոչի ենթակա անձանց անձնական տվյալների ուսումնասիրությունն իրականացվում է նրանց հետ անմիջական զրույցի և անձնական գործում առկա փաստաթղթերն ուսումնասիրելու միջոցով: ՈՒսումնասիրության ընթացքում ճշտված տվյալները լրացվում են ուսումնասիրման թերթիկում, որը հաստատվում է ուսումնասիրություն անցկացնող պաշտոնատար անձի և զորակոչի ենթակա անձի կամ նրա օրինական ներկայացուցչի ստորագրություններով՝ նշելով ուսումնասիրություն կատարողի անուն, ազգանուն, ինչպես նաև ուսումնասիրությունը կատարելու օրը, ամիսը, տարին:

IV. ՊԱՀԵՍՏԱԶՈՐԻ ՍՊԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

15. Պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչերի կազմակերպումն ապահովող մարմիններն են հանդիսանում.

1) զինվորական կոմիսարիատը,

2) պահեստազորի սպաների զորակոչի մանդատային հանձնաժողով:

V. ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԸ

16. Պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչերի պատշաճ իրականացման համար պատասխանատու է համապատասխան զինվորական կոմիսարիատը, որի շրջանակներում զինվորական կոմիսարը՝

1) անհրաժեշտ փաստաթղթերը և տվյալները զինվորական կոմիսարիատ ներկայացվելուց հետո նախապես կազմված ժամանակացույցի համաձայն կազմակերպում է պահեստազորի սպայական կազմի զորակոչերի ենթակա քաղաքացիների առողջական վիճակի նախնական և անհրաժեշտ այլ հետազոտությունների ուղեգրման գործընթացը՝ օրենքով սահմանված կարգով հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնելու համար.

2) նախապատրաստում և նախնական եզրակացությամբ պահեստազորի սպաների զորակոչային մանդատային հանձնաժողով է ներկայացնում օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանգամանքի վերաբերյալ փաստաթղթերը և անձնական գործը՝ պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու վերաբերյալ եզրակացություն կայացնելու համար (համաձայն N 3 ձևի).

3) նախապատրաստում և նախնական եզրակացությամբ զորակոչային մանդատային հանձնաժողով է ներկայացնում օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ և 24-րդ հոդվածի 6-րդ մասերով նախատեսված հանգամանքների վերաբերյալ փաստաթղթերը և անձնական գործը՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրամադրելու վերաբերյալ եզրակացություն կայացնելու համար (համաձայն N 4 ձևի).

4) իրավասու բժշկական հանձնաժողով է ներկայացնում առողջական խնդիրներ ունեցող պահեստազորի սպայական կազմի զորակոչերի ենթակա քաղաքացիների նախնական և այլ հետազոտությունները, նրանց առողջական վիճակի վերաբերյալ առկա այլ փաստաթղթերը՝ օրենքով սահմանված կարգով բժշկական փորձաքննություն իրականացնելու և պիտանիության վերաբերյալ եզրակացություն ներկայացնելու համար.

5) պահեստազորի սպայական կազմի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանները ստանալուց հետո եռօրյա ժամկետում դրանք գրանցվում են պահեստազորի սպայական կազմի վերաբերյալ կայացված որոշումների հաշվառման մատյանում (համաձայն N 5 ձևի):

17. Պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ տարկետում ստանալու հիմքը հաստատող փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակով և դրանց պատճեններով: Եթե պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ տարկետում ստանալու հիմքը հաստատող փաստաթղթերը հանդիսանում են օտարերկրյա պետությունում տրված փաստաթղթեր, ապա դրանք պետք է ներկայացվեն նոտարական կարգով հաստատված հայերեն թարգմանությամբ: Պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ տարկետում ստանալու հիմքը հաստատող բնօրինակ փաստաթղթերը համեմատվում են դրանց պատճենների հետ, որից հետո բնօրինակ փաստաթղթերը վերադարձվում են քաղաքացուն:

18. Օրենքով սահմանված այն դեպքերում, երբ քաղաքացին իրավունք ունի հրաժարվել իր ունեցած տարկետման իրավունքից կամ ստացած տարկետումից և ցանկություն է հայտնում զորակոչվելու պարտադիր զինվորական ծառայության, ապա այդ մասին դիմում է ներկայացնում իր զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ: Դիմումը սահմանված կարգով գրանցվելուց հետո տվյալ քաղաքացին ընդգրկվում է զորակոչի ենթակա անձանց ցուցակում, նրա անձնական գործը տեղափոխվում է հաշվառման նախապես կազմված քարտադարան և նրա զորակոչի գործընթացն իրականացվում է ընդհանուր հիմունքներով՝ սույն Կարգի պահանջներին համապատասխան:

19. Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական մարմնում կամ հյուպատոսական հիմնարկում հաշվառված և պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա (այդ թվում՝ տարկետման իրավունքը կորցրած կամ տարկետման ժամկետը լրացած) քաղաքացիների պարտադիր զինվորական ծառայության զորակոչի կամ զորակոչից տարկետում տրամադրելու կամ զինվորական ծառայությունից ազատելու գործընթացը

Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարի կարգադրությամբ իրականացվում է համապատասխան տարածքային զինվորական կոմիսարիատի կողմից՝ սույն կարգի պահանջներին համապատասխան:

VI. ՊԱՀԵՍՏԱԶՈՐԻ ՍՊԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻ ՄԱՆԴԱՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ (ՊՍԶ ՄՀ)

20. Պահեստազորի սպաների զորակոչի մանդատային հանձնաժողովը պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչերի կազմակերպումն ապահովող մարմին է, որը ստեղծվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով: ՊՍԶ ՄՀ-ի կազմում ընդգրկվում է հանձնաժողովի նախագահը, առնվազն 3 անդամները և քարտուղարը: ՊՍԶ ՄՀ-ն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով: Նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի անդամների կեսից ավելին: ՊՍԶ ՄՀ-ի կողմից եզրակացություններն ընդունվում են բաց քվեարկությամբ և ձայների պարզ մեծամասնությամբ: ՊՍԶ ՄՀ-ի աշխատանքներն արձանագրվում են մատյանում, որի լրացման համար պատասխանատու է հանձնաժողովի քարտուղարը: Ընդունված եզրակացության հետ համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամն իրավունք ունի ներկայացնել հատուկ կարծիք, որը կցվում է եզրակացությանը:

21. ՊՍԶ ՄՀ-ն.

1) համակարգում և վերահսկում է պահեստազորի սպայական կազմի զորակոչի ապահովման ուղղությամբ զինվորական կոմիսարիատների (զինվորական կոմիսարների) գործունեությունը.

2) կայացնում է եզրակացություն (համաձայն N 6 ձևի) օրենքով պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման հիմք չունեցող պահեստազորի սպայական կազմի

քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչելու մասին և եզրակացության օրինակը եռօրյա ժամկետում ուղարկում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին, ինչպես նաև տրամադրում է քաղաքացուն կամ նրա օրինական ներկայացուցչին.

3) իրավասու բժշկական հանձնաժողովների կողմից եզրակացություններն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում եզրակացություն է կայացնում (համաձայն N 7 ձևի) օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքով և 23-րդ հոդվածի 6-րդ ու 7-րդ մասերով նախատեսված դեպքերում պահեստազորի սպայական կազմի քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու մասին և եզրակացությունը եռօրյա ժամկետում ուղարկում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին, ինչպես նաև եզրակացության օրինակը տրամադրում է քաղաքացուն կամ նրա օրինական ներկայացուցչին.

4) իրավասու բժշկական հանձնաժողովների կողմից եզրակացություններն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում եզրակացություն է կայացնում (համաձայն N 8 ձևի) օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հիմքերով և ժամկետներում պահեստազորի սպայական կազմի քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին և եզրակացությունը եռօրյա ժամկետում ուղարկում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին, ինչպես նաև եզրակացության օրինակը տրամադրում է քաղաքացուն կամ նրա օրինական ներկայացուցչին.

5) զինվորական կոմիսարիատից անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում եզրակացություն է կայացնում է օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով պահեստազորի սպայական կազմի քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու մասին, որից հետո եզրակացությունը եռօրյա ժամկետում ուղարկում է Հայաստանի Հանրապե-

տության պաշտպանության նախարարին, ինչպես նաև եզրակացության օրինակը տրամադրում է քաղաքացուն կամ նրա օրինական ներկայացուցչին.

6) զինվորական կոմիսարիատից անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում եզրակացություն է կայացնում է օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ և/կամ 24-րդ հոդվածի 6-րդ մասերով նախատեսված հիմքերով և նույն հոդվածներով նախատեսված ժամկետներում պահեստազորի սպայական կազմի քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին, որից հետո եզրակացությունը եռօրյա ժամկետում ուղարկում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին, ինչպես նաև եզրակացության օրինակը տրամադրում է քաղաքացուն կամ նրա օրինական ներկայացուցչին.

7) Օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա սահմանված զորակոչի ենթակա անձանց թվաքանակը սույն կետի 2-րդ ենթակետի համաձայն լրանալու դեպքում զորակոչին կանչված մնացած քաղաքացիների զորակոչը հետաձգելու մասին կայացնում է եզրակացություն (համաձայն N 9 ձևի), որից հետո եզրակացությունը եռօրյա ժամկետում ուղարկում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին, ինչպես նաև եզրակացության օրինակը տրամադրում է քաղաքացուն կամ նրա օրինական ներկայացուցչին.

8) քննարկում է զինվորական կոմիսարիատների (զինվորական կոմիսարների) գործունեության վերաբերյալ տրված բողոքները:

VII. ՊԱՀԵՍՏԱԶՈՐԻ ՍՊԱՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԸ

22. Սույն կարգի 21-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանը ստանալուց հետո զինվորական կոմիսարիատը քաղաքացուն փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով (համաձայն N 10 ձևի) ծանուցում է պարտադիր զինվորական ծառայության

զորակոչվելու նպատակով զինվորական կոմիսարիատ ներկայանալու պարտավորության մասին՝ ծանուցման մեջ նշելով ներկայանալու ժամկետը:

23. Ծանուցագրում նշված օրը զինվորական կոմիսարիատ ներկայանալիս զինվորական կոմիսարիատում ստուգվում է զինվորական ծառայության զորակոչվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը: Մասնավորապես ստուգվում են. պահեստազորի սպայական կազմի քաղաքացիների անձնական գործերը, զինգրքույկները, հաշվեծառայողական քարտերը (ՀԾՔ-երը)՝ հանրային ծառայությունների համարանիշի պարտադիր գրառմամբ, իսկ հանրային ծառայությունների համարանիշ ստացած չլինելու դեպքում՝ այդ մասին իրավասու պետական մարմնի կողմից տրված տեղեկանքը, վիճակահանության թերթիկները (զինվորական կոմիսարիատների կողմից լրացված և կնիքով հաստատված), բժշկական գրքույկները՝ լրացված և ստորագրված զինկոմիսարիատի բժշկի (ԶԲՀ-ի կամ ԱՊ ԶԲՀ-ի պատասխանատու անձի) կողմից՝ նախկինում զորակոչիկների տարած վարակիչ հիվանդությունների, կատարված կանխարգելիչ պատվաստումների և դրանց հակացուցումների վերաբերյալ տեղեկատվությամբ:

24. Օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասերի համաձայն հայտարարված զորակոչի շրջանակներում սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զոչակոչված զինծառայողների՝ ըստ զորամասերի ծառայության նշանակման գործընթացն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով սահմանված կարգով:

25. Հերթական զորակոչի ավարտից հետո զինվորական կոմիսարի հանձնարարությամբ զորահավաքի բաժանմունքի պետը ստուգում է սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչված զինծառայողների անձնական գործերի և նրանց վերաբերյալ կայացված որոշումների (եզրակացությունների),

անհրաժեշտ գրառումների առկայությունը: Ստուգման արդյունքները արձանագրվում են, որը հաստատվում է զինվորական կոմիսարի ստորագրությամբ և կնիքով:

26. Հայտարարված զորակոչի ընթացքում զինվորական կոմիսարիատ չներկայացած կամ զորակոչից խուսափած անձանց անձնական գործերի պատճենները, հաստատված զինվորական կոմիսարի կնիքով, զորակոչի ավարտից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան միջնորդությամբ ներկայացվում են Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության համապատասխան կայազորային քննչական բաժին՝ միաժամանակ տեղեկացնելով համապատասխան կայազորային զինվորական դատախազությանը:

27. Հայտարարված զորակոչի ավարտից հետո 20 աշխատանքային օրվա ընթացքում բոլոր տարածքային զինվորական կոմիսարիատները կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնում են Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատ՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում զորակոչի արդյունքներն ամփոփելու և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին ներկայացնելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Ձև N 1

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
_____ ՔԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

_____ _____ _____
(կոչումը) (ստորագրությունը) (անվանատառը, ազգանունը)

ՊԱՀԵՍՏԱՔՈՐԻ ՍՊԱՅԱԿԱՆ ԿԱՔՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՔԻՆՎՈՐԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 20 Թ. ՔՈՐԱԿՈՉԻՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ
ԱՆՎԱՆԱՑՈՒՑԱԿ

NN ը/կ	Ազգանունը, անունը, հայրանունը	Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը	Բնակության վայրի հաշվառման հասցեն	Հեռախոսահամարը	Ծանոթա-գրություն

_____ ՔԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՔՈՐԱԿՈՉԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏ

_____ _____ _____
(կոչումը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Ձև N 2

Քաղաքացի _____

Հասցեն_____

_____

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14-րդ հոդվածի 3-րդ մասի և «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի՝ Դուք ենթակա եք զորակոչման պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության 20 թվականի զորակոչին:

Անհրաժեշտ է 20 թ. _____-ի _____-ին ժամը _____-ին ներկայանալ
(ամիս) (օր)

_____ զինվորական կոմիսարիատ հետևյալ հասցեով՝_____

_____

զորակոչային միջոցառումներին մասնակցելու համար:

_____ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ _____
(զինկոմիսարիատ) (ստորագրություն,

_____
կոչում, անուն, ազգանուն)

Կտրման գիծ

_____

ՍՏԱՑԱԿԱՆ

____ _____ 20 թվականին զորակոչային միջոցառումներին մասնակցելու համար զինվորական կոմիսարիատ ներկայանալու ծանուցագիրը ստացա:

_____
(անուն, հայրանուն, ազգանուն)

_____
(ստորագրություն)

____ _____ 20 թ.

Ծանուցագիրը էլեկտրոնային եղանակով ուղարկվելու դեպքում ստացականը չի լրացվում:

Ձև N 3

ՆԱԽՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
(պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայությունից քաղաքացու ազատման ենթակա լինելու վերաբերյալ)

Քաղաքացի _____
(ծննդյան, օր, ամիս, տարի, անուն,հայրանուն, ազգանուն,

_____ զինկոմիսարիատ:
հաշվառման զինվորական կոմիսարիատ)

1. Կարգավիճակի նկարագրությունը _____

_____

_____

_____

_____

_____

_____

_____:

2. Հիմք հանդիսացող փաստաթղթերը _____

_____

_____

_____:

3. Նախնական եզրակացություն՝

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի_____հոդվածի _____ մասի _____ կետի պահանջների ենթակա է ազատման պարտադիր զինվորական ծառայությունից:

Ներկայացվում է պահեստազորի սպաների զորակոչի մանդատային հանձնաժողով՝ պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու վերաբերյալ եզրակացություն կայացնելու համար:

_____ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

Կ.Տ.

_____
(կոչում, ստորագրություն, անուն, ազգանուն)

____ _____ 20 թ.

18_1132

ՊԱՀԵՍՏԱԶՈՐԻ ՍՊԱՆԵՐԻ ԶՈՐԱԿՈՉԻ ՄԱՆԴԱՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

_____ 20 թվականի N _____

ՊԱՀԵՍՏԱԶՈՐԻ ՍՊԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՔԱՂԱՔԱՑՈՒ՝ ԱԶԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 20 թվականի _____-ի ____-ի N _____ որոշման պահանջներով՝ պահեստազորի սպաների զորակոչի մանդատային հանձնաժողովը **եզրակացնում է**.

1. Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի _____ հոդվածի _____ մասի _____ կետի պահանջների ենթակա է ազատման պարտադիր զինվորական ծառայությունից՝ _____

_____ -ը:

(քաղաքացու ծննդյան օր, ամիս, տարի, անուն, հայրանուն, ազգանուն)

2. Եզրակացության օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին և տրամադրել քաղաքացի _____ -ին (օրինական ներկայացուցչին):

Հանձնաժողովի նախագահ՝ _____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

անդամներ՝

_____

_____

_____

_____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

քարտուղար՝ _____:

(ստորագրություն, անուն, ազգանուն)

____ _____ 20 թ.

Զինվորական կոմիսարիատում հաշվառված է N _____, ____ _____ 20 թ.

Ձև N 4

ՆԱԽՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
(պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքից քաղաքացու օգտվելու վերաբերյալ)

Քաղաքացի _____
(ծննդյան, օր, ամիս, տարի, անուն,հայրանուն, ազգանուն,

_____ զինկոմիսարիատ:
հաշվառման զինվորական կոմիսարիատ)

1. Կարգավիճակի նկարագրությունը _____

_____

_____

_____

_____

_____

_____

_____:

2. Հիմք հանդիսացող փաստաթղթերը _____

_____

_____

_____:

3. Նախնական եզրակացություն՝

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի_____հոդվածի _____ մասի ____ կետի պահանջների օգտվում է մինչև 20 թվականի _____-ի ____-ը պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու իրավունքից:

Ներկայացվում է պահեստազորի սպաների զորակոչի մանդատային հանձնաժողով՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու վերաբերյալ եզրակացություն կայացնելու համար:

_____ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

Կ.Տ.

_____
(կոչում, ստորագրություն, անուն, ազգանուն)

____ _____ 20 թ.

18_1132

ՊԱՀԵՍՏԱԶՈՐԻ ՍՊԱՆԵՐԻ ԶՈՐԱԿՈՉԻ ՄԱՆԴԱՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

_____ _____ 20 թվականի N _____

ՊԱՀԵՍՏԱԶՈՐԻ ՍՊԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՔԱՂԱՔԱՑՈՒ՝ ՏԱՐԿԵՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի «գ» ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 20 թվականի _____-ի ____-ի N _____ որոշման պահանջներով՝ պահեստազորի սպաների զորակոչի մանդատային հանձնաժողովը **եզրակացնում է**.

1. Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի_____հոդվածի_____ մասի _____ կետի պահանջների՝ _____

_____ -ը

(ծննդյան օր, ամիս, տարի, անուն, հայրանուն, ազգանուն)

օգտվում է պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքից՝ մինչև 20 թվականի _____ -ի ____ -ը:

2. Եզրակացության օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին և տրամադրել քաղաքացի _____ -ին (օրինական ներկայացուցչին):

Հանձնաժողովի նախագահ՝ _____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

անդամներ՝

_____

_____

_____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

քարտուղար՝ _____:

(ստորագրություն, անուն, ազգանուն)

____ _____ 20 թ.

Զինվորական կոմիսարիատում հաշվառված է N _____, ____ _____ 20 թ.

Պահպանման ժամկետը՝ _____ տարի

Ձև N 5

ՊԱՀԵՍՏԱԶՈՐԻ ՍՊԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՔԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ _____ ԹՎԱԿԱՆԻ ՔՈՐԱԿՈՉԻՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՅԱՑՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

Մ Ա Տ Յ Ա Ն

Սկսված է՝ ___ _____ 20 թ.

Ավարտված է՝ ___ _____20 թ.

NN ը/կ	Ազգանունը, անունը, հայրանունը	Ծննդյան թիվը	Որոշում կայացնող մարմինը

Որոշման համարը և կայացման օրը, ամիսը տարեթիվը	Կայացված որոշումը	Ծանոթություն

Ձև N 6

ՊԱՀԵՍՏԱԶՈՐԻ ՍՊԱՆԵՐԻ ԶՈՐԱԿՈՉԻ ՄԱՆԴԱՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

_____ _____ 20 թվականի N _____

ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՊԱՀԵՍՏԱԶՈՐԻ ՍՊԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 7-րդ մասի, 2-րդ կետի «ա» ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 20 թվականի _____-ի ____-ի N _____ որոշման պահանջներով՝ պահեստազորի սպաների զորակոչի մանդատային հանձնաժողովը **եզրակացնում է**.

1. Պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչման ենթակա է պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման հիմք չունեցող քաղաքացի _____

_____-ը:
(ծննդյան օր, ամիս, տարի, անուն, հայրանուն, ազգանուն)

2. Եզրակացությունը եռօրյա ժամկետում ուղարկել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին:

Հանձնաժողովի նախագահ՝ _____
(ստորագրություն, անուն, ազգանուն)

անդամներ՝

_____

_____

_____

քարտուղար՝ _____
(ստորագրություն, անուն, ազգանուն)

____ _____ 20 թ.

Զինվորական կոմիսարիատում հաշվառված է N _____, ____ _____ 20 թ.

Ձև N 7

ՊԱՀԵՍՏԱԶՈՐԻ ՍՊԱՆԵՐԻ ԶՈՐԱԿՈՉԻ ՄԱՆԴԱՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

_____ 20 թվականի N _____

ՊԱՀԵՍՏԱԶՈՐԻ ՍՊԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՔԱՂԱՔԱՑՈՒ՝ ԱԶԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 20 թվականի _____-ի ____-ի N _____ որոշման պահանջներով և հիմք ընդունելով իրավասու բժշկական հանձնաժողովի եզրակացությունները՝ պահեստազորի սպաների զորակոչի մանդատային հանձնաժողովը **եզրակացնում է**.

1. Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի _____ հոդվածի _____ մասի _____ կետի պահանջների՝ ներքոնշյալ քաղաքացիներն օգտվում են պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատման իրավունքից.

NN ը/կ	Զինվորական կոմիսարիատ	Ազգանուն, անուն, հայրանուն, ծննդյան օր, ամիս, տարի	Հիվանդությունների ցանկի հոդվածը և կետը
1			
2			

2. Եզրակացությունը եռօրյա ժամկետում ուղարկել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին:

Հանձնաժողովի նախագահ՝ _____
(ստորագրություն, անուն, ազգանուն)

անդամներ՝

_____

_____

_____

քարտուղար՝ _____
(ստորագրություն, անուն, ազգանուն)

____ _____ 20 թ.

Զինվորական կոմիսարիատում հաշվառված է N _____, ____ _____ 20 թ.

Ձև N 8

ՊԱՀԵՍՏԱԶՈՐԻ ՍՊԱՆԵՐԻ ԶՈՐԱԿՈՉԻ ՄԱՆԴԱՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

_____ 20 թվականի N _____

ՊԱՀԵՍՏԱԶՈՐԻ ՍՊԱՅԱԿԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՔԱՂԱՔԱՑՈՒ՝ ՏԱՐԿԵՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի «գ» ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 20 թվականի _____-ի ____-ի N _____ որոշման պահանջներով և հիմք ընդունելով իրավասու բժշկական հանձնաժողովի եզրակացությունները՝ պահեստազորի սպաների զորակոչի մանդատային հանձնաժողովը **եզրակացնում է**.

1. Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի _____ հոդվածի _____ մասի _____ կետի պահանջների՝ ներքոնշյալ քաղաքացիներն օգտվում են պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքից.

NN ը/կ	Զինվորական կոմիսարիատ	Ազգանուն, անուն, հայրանուն, ծննդյան օր, ամիս, տարի	Տարկետման ժամկետը	Հիվանդությունների ցանկի հոդվածը և կետը
1				
2				

2. Եզրակացությունը եռօրյա ժամկետում ուղարկել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին:

Հանձնաժողովի նախագահ՝ _____
(ստորագրություն, անուն, ազգանուն)

անդամներ՝

_____

_____

_____

քարտուղար՝ _____
(ստորագրություն, անուն, ազգանուն)

____ _____ 20 թ.

Զինվորական կոմիսարիատում հաշվառված է N _____, ____ _____ 20 թ.

Ձև N 9

ՊԱՀԵՍՏԱԶՈՐԻ ՍՊԱՆԵՐԻ ԶՈՐԱԿՈՉԻ ՄԱՆԴԱՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

_____ 20 թվականի N _____

ՊԱՀԵՍՏԱԶՈՐԻ ՍՊԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԶՈՐԱԿՈՉԸ ՀԵՏԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի «դ» ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 20 թվականի _____-ի ____-ի N _____ որոշման պահանջներով՝ պահեստազորի սպաների զորակոչի մանդատային հանձնաժողովը **եզրակացնում է**.

1. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա սահմանված զորակոչի ենթակա անձանց թվաքանակը լրանալու պատճառով ենթակա է հետաձգման պահեստազորի սպաների պարտադիր զինվորական ծառայության զորակոչին կանչված ներքոնշյալ քաղաքացիների զորակոչը.

NN ը/կ	Զինվորական կոմիսարիատ	Ազգանուն, անուն, հայրանուն, ծննդյան օր, ամիս, տարի	Զորակոչի հետաձգման ժամկետը
1			
2			

2. Եզրակացության օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին և տրամադրել քաղաքացի _____ -ին (օրինական ներկայացուցչին):

Հանձնաժողովի նախագահ՝ _____
(ստորագրություն, անուն, ազգանուն)

անդամներ՝

_____

_____

_____

քարտուղար՝ _____
(ստորագրություն, անուն, ազգանուն)

____ _____ 20 թ.

Զինվորական կոմիսարիատում հաշվառված է N _____, ____ _____ 20 թ.

Ձև N 10

Քաղաքացի _____

Հասցեն_____

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14-րդ հոդվածի 3-րդ մասի և «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի Դուք ենթակա եք պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի:

Անհրաժեշտ է 20 թ. _____-ի _____-ին ժամը _____-ին անձը հաստատող փաստաթղթով
(ամիս) (օր)

ներկայանալ _____ զինվորական կոմիսարիատ հետևյալ հասցեով՝_____, պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու համար:

Պարտավոր եմ նաև տեղեկացնել, որ պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու համար տարածքային զինվորական կոմիսարիատ չներկայանալը և զորակոչից խուսափելն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվության:

_____ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ _____
(զինկոմիսարիատ) (ստորագրություն,

_____
կոչում, անուն, ազգանուն)

Կտրման գիծ

_____

ՍՏԱՑԱԿԱՆ

____ _____20 թվականին պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու համար զինվորական կոմիսարիատ ներկայանալու ծանուցագիրը ստացա:

_____
(անունը, հայրանունը, ազգանունը)

_____
(ստորագրությունը)

____ _____ 20 թ.

Ծանուցագիրը էլեկտրոնային եղանակով ուղարկվելու դեպքում ստացականը չի լրացվում: